Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9411

…ՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. (Բ) Կ. ԼԵՆՔԱՂԿՈՄԻ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

# ԿՈՒՍ. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՈՎ ԲԱՐԵԼԱՎԵՆՔ ԲԱՆՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

1. ԿՈՈՊ. ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԲՋԻՋՆԵՐԻ ԿՈՒՍ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ
2. ԺՈՂՍՆՆԴԻ ԲՋԻՋՆԵՐԻ ԿՈՒՍ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ
3. ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԲՋԻՋՆԵՐԻ ԿՈՒՍ.ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆ
1932 թ.

«ԼԵՆԿՈՄՏՐԵՍՏԻ» ՏՊԱՐԱՆ № 1726

3кп5 (47.925)
Z-24

3кп5(47,925)
Հ-24
ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
1 DEC 2009

# ԿՈՈՊԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԲՋԻՋՆԵՐԻ ԿՈՒՍ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հ. Կ. (բ) Կ. Կենտկոմի 1932 թ. օգոստոսի 8-ի վորոշումը)։

Քաղկոմի բյուրոն լսելով զեկուցում կոոպ. առևտրական ցանցի կուս. բջիջների, կազմ. կուս. և մասսայական դաստիարակչական աշխատանքների վերակառուցման մասին, խորհրդային և կոլխոզ-կուլտուրական առևտրի ծավալման մասին Համ. Կ.Կ.(բ) Կենտկոմի և ԺԿԽ-ի վերջին վորոշումների կապակցությամբ արձանագրում է, վոր կոոպ. առևտրական ցանցի կուս. բջիջները դեռ չեն կարողացել իրապես վերակառուցել իրենց աշխատանքները համապատասխան խորհրդային կուլտուրական առևտրի ներկա պահանջների ըստ վորում

ա) Առևտրական ցանցում վողջ աշխատողների նկատմամբ դեռևս բարակ շերտ են կազմում կոմունիստները (ամբողջ աշխատողների 12 տոկոս) և չի ապահոված նրանց առաջատար դերն խորհրդային. կուլտուրական առևտրի գործում։

բ) Կուս. կազմ և մասսայական աշխատանքների վերակառուցումը չի շաղկապված այդ աշխատանքների ծանրությունը, խանութները և պահեստները տեղափոխելու հետ և կուս ուժերի ճիշտ չդասավորման հետևանքով բոլոր առևտրական միավորներում չի ապահոված կուս. խմբակների և կազմակերպիչների կազմակերպումը։

գ) Միանգամայն բացակայել է կուս. բջիջների աշխատանքը առևտրական կադրերի պատրաստման գործում, չեն աշխատել առևտրական խորհրդակցությունները, բացակայել է առևտրական տեխնիկային տիրապետելու ուղղությամբ տարվելիք աշխատանքները, առաջավոր քաղաքների կուլտուրական առևտրի նվաճումները չեն ուսում-

փակվել տեղառևտրական կետերը, թույլ է տրվում պայքարը առևտրական աշխատողների վորակավորման համար, վորի հետևանքով և ոտար խորթ, նախկին սպեկուլյանտ տարրերը խցկվել են առևտրական ցանցը և այդպիսով խեղաթյուրել կուս. դիրեկտիվները խորհրդային առևտրի մասին:

դ) Թույլ է յեղել պայքարը խորհրդային առևտրի մեջ հաճախ հանդես յեկող դասակարգային խորթ և նեպմանական տրամադրությունների, ինչպես և ինքնամատակարարման խայտառակ փաստերի դեմ:

յե) Թույլ է յեղել կուս. բջիջների հսկողությունը գների քաղաքականության ճիշտ կիրառման վրա, վորի հետևանքով հաճախ գների խախտում է՝ տեղի ունեցել առանձին առևտրական միավորումներում:

զ) Բրակի, վատնումների, ապրանքների քնեցման և ներքին միջոցների մոբիլիզացիայի դեմ պայքարն իր բարձրության վրա դրված չի յեղել:

է) Առևտրական կադրերի հոսունության դեմ միջոցառումներ ժամանակին ձեռք չեն առնվել:

ը) Ընկ. ՍՏԱԼԻՆԻ 6 ցուցմունքների կիրառման շուրջը կոոպ. առևտրական ցանցի աշխատողների ուշադրությունը մոբիլիզացիայի չի յենթարկված յեղել և բջիջները քիչ ուշադրություն են դարձրել այն կենսագործման վրա:

թ) Առևտրական ցանցում հաշվեառման ու հաշվետվության գործը, ապրանքների արագ շրջանառությունը կատարելը և այդ կապակցությամբ ֆինանսական միջոցների մոբիլիզացիայի հարցերն իրենց արտացոլումն չեն գտել կուս. բջիջների աշխատանքների մեջ:

ժ) Թույլ է քաղ. դաստիարակչական աշխատանքներն առևտրական ցանցում աշխատող կոմմունիստների և կոմերիտականների մեջ, ինչպես և մասսայական դաստիարակչական աշխատանքներն անկուսակցականների մեջ:

ի) Սոցմրցման և հարվածայնության աշխատանքների թույլ ծավալման հետևանքով, թույլ է մասսաների կարծիքների մոբիլիզացիան հարվածայնության խնդիրների շուրջը:

Յելնելով վերոհիշյալից Բազկոմի բյուրոն վորոշում է.



9411
ՀՍՍՌ-Арм ССР
60371-67

1) Վերակառուցել առևտրական կետերի գոյություն ունեցող կուսակցական կազմակերպության ցանցը և բոլոր փակ բանվորական կոոպերատիվներին (ՓԲԿ) կից կազմակերպել կուսակցական բջիջներ կամ թեկնածական խմբակներ: Այն բոլոր առևտրական կետերում, վորտեղ կոմմունիստների քչության պատճառով հնարավոր չի կազմակերպել կուս. խմբակներ կամ թեկնածական խմբակներ ստեղծել կազմակերպիչների ինստիտուտ:

Առանձին տնտեսական միավորներին (գործարաններ) կից կոոպ. առևտրական կետերի, կուսակցական կազմակերպությունների ղեկավարությունն ամբողջովին հանձնել տվյալ գործարանային կուսակցական կոմիտեյին:

Առանձին արտադրական ցեխերին կից գտնվող առևտրական կետերում աշխատող կոմունիստները, վորպես կանոն պետք է մտնեն այդ ցեխերին կից կազմակերպված կուս. բջջի մեջ և իրենց աշխատանքների համար ամբողջովին պատասխանատու յեն լինելու այդ բջիջների առաջ:

2) Առևտրական ցանցի կուսակցական աշխատանքների վերակառուցումն անցկացնել կուսակցական մասսայական աշխատանքների կենտրոնը խանութները, պահեստները և ոժանդակող միավորները տեղափոխելու նշանաբանի տակ:

Հատուկ ուշադրություն դարձնել խմբակների և կուս. կազմակերպիչների աշխատանքներին բջիջների ղեկավարությունն ուժեղացնելու վրա, ապահովել բջիջների ոժանդակությունն ու ղեկավարությունը խանութներում տարվող տնտեսական, քաղաքական և դաստիարակչական աշխատանքների վրա:

3) Ստուգել կուսակցական ուժերի դասավորումն և ապահովել կոմունիստների առաջատար դերը խորհրթային կուլտուրական առևտրի գործում, անցկացնելով կոմունիստների դերի հատուկ ստուգատես առևտրական բջիջներում, միաժամանակ լուրջ աշխատանք ծավալել աճման ուղերով պատրաստելու և ակտիվ նվիրված, կայուն աշխատողների շարքերից հետզ-հետե ընդունել կուս. շարքերը:

4) Լայն ծավալել բոլշևիկյան ինքնաքննադատությունը

և ներկուսակցական դեմոկրատիան բջիջներում և խմբակներում և դրա հիման վրա ել ավելի ակտիվ մասնակից անել կոմմունիստներին առևտրական միավորների առաջ կանգնած խնդիրների լուծման գործում, բարձրացնելով նրանց պատասխանատվությունը կուսակցության դիրեկտիվներն իրագործելու մեջ։

5) Ոգոստոս ամսում անցկացնել կոոպ. առևտրական բջիջների բյուրոների հաշվետվություն նպատակ դնելով նրանց աշխատանքներն արմատապես վերակառուցել ինչպես և ոժանդակելու կոլխոզների, կոլխոզնիկների յեվ մենատնտեսների առևտրին առաջին հերթին վերացնելով լայն սպառման ապրանքներ գյուղում տեղափոխելու գործում յեղած թերությունները և մաքրել կոոպ. առևտրական ապարատն օտար քայքայված բյուրոկրատ, օպորտունիստ և դասակարգայնորեն խորթ տարրերից, բարձրացնելով կոոպ. առևտրական բոլոր օղակների պատասխանատվությունը կուս. վորոշումների կիրառման գործում։

6) Առաջարկել կազմ հրահանգչական բաժնին հատուկ ուշադրություն դարձնելու քաղաքի առևտրական ցանցի կուս. բջիջների քարտուղարների կազմի ընտրության յեվ նրանց պատրաստման վրա, ձեռք առնելով բոլոր միջոցները. կոոպ. առևտրական ցանցի կուս. կադրերի հոսունության դեմ առնելու։

7) Առաջարկել Ագիտ մասսբաժնին և կոոպ. առևտրական միության Քաղկոմին ստուգելու ընկ. ՍՏԱԼԻՆԻ 6 ցուցմունքների կատարողականությունը կոոպ. առևտրական ցանցում, կազմակերպել և դնել արտադրական խորհրդակցությունների աշխատանքները, ծավալել լայն մասսայական դաստիարակչական աշխատանքներ բանվորների և աշխատողների շրջանում ինչպես և սոց. մրցման ու հարվածայնության աշխատանքները։

8) Առաջարկել բոլոր բջիջներին ապահովել կոոպառևտրական կետերի պլանների լայն մասսայականցումը բանվոր-աշխատողների մեջ և ապահովել նրանց ակտիվ մասնակցությունն այդ պլանների կատարման գործում։



9) Ապահովել կոոպ.-առևտրական ցանցի միջին յեվ ստորին օղակների յեռանկյունու նորմալ աշխատանքները և վերջ տալ իրավունքների շփոթության դեպքերին։

10) Առաջարկել քաղկոոպի Հայառի, Տեքստիլ կոոպի, Թայտոպի, Զինկոոպի, Սպառկոոպի վարչություններին ձեռք առնելու կտրուկ միջոցներ ամենակարճ ժամանակամիջոցում ամրացնելու վարչության ստորին հաշվապահական ապարատը և ուժեղացնելու կենդանի ղեկավարությունը խանութների, պահեստների և ոժանդակող կետերի վրա։

11) Առաջարկել կուլտ պրոպ. բաժնին հատուկ հսկողության տակ առնելու կոոպ. առևտրական ցանցում աշխատող կոմունիստների քաղաքական և տեսական պատրաստականության հարցերը և կուս. կաբինետի միջոցով ոգնել և ոժանդակել նրանց տեսականորեն պատրաստվելու, կազմակերպելով նրանց համար դեկուցումներ կոոպերատիվ և առևտրական առանձին հարցերի շուրջը։ Սրել նրանց քաղաքական զգոնությունը դեպի օպորտունիզմի կոնկրետ արտահայտությունները կոոպերացիայի և առևտրի գործում։

12) Պատի լրագրերի միանգամայն թույլ աշխատանքը կոոպ. առևտրական ցանցի աշխատանքների վերակառուցման գործում, հրամայական պահանջ է դնում ամենակարճ ժամանակամիջոցում վերակառուցելու պատի լրագրների աշխատանքները, վորի համար առաջարկել կուլտ. պրոպ բաժնին մինչև ոգոստոսի 20-ը անցկացնել պատի լրագրերի աշխատանքների ստուգատես։

13) Առաջարկել ԼԿՅԵՄ քաղկոմին և բոլոր կոմ. բջիջներին հատուկ հսկողության տակ առնել կոմյերիտականների խանութները, այն դարձնելու դրական փորձի կենտրոններ։ Միաժամանակ ԼԿՅԵՄ քաղկոմին անցկացնել բջիջների աշխատանքների ստուգատես, նրանց աշխատանքները վերակառուցելու նպատակով։

14) Գտնել անհրաժեշտ կոոպ. առևտրական ինստիտուտի կուս. ուսանողներին կցել առանձին բջիջներին (խմբակներին) ոժանդակելու նրանց կուլտուրական առևտուրը կազմակերպելու գործում։

15) Առաջարկել կազմհրահանգչական բաժնին մինչև ամսիս 10-ը հրավիրելու Կոոպ. առևտրական ցանցի կուս. աշխատանքների համաքաղաքային ժողով և հատուկ զեկուցում դնել նրանց հերթական անելիքների մասին կապված կուս. աշխատանքների վերակառուցման հետ։

16) Կոոպ. առևտրական ցանցի կուս. աշխատանքներն ուժեղացնելու նպատակով գտնել անհրաժեշտ քաղկոմին կից ունենալ ազատ հրահանգիչ։

17) Քաղքոմը գտնում է, վոր Կոոպ առևտրական ցանցում աշխատող կոմունիստների պատվի խնդիրը պետք է լինի ամենակարճ ժամանակամիջոցում կուսակցության վորոշումներից յելնելով բանվորության և աշխատավորության առաջավոր մասին կարծիքների հաշվեառման հիման վրա նրանց օժանդակությամբ ծավալել կոլխոզների, կոլխոզնիկների և մենատնտեսների առևտուրը, ուժեղ պայքար մղելով կուսակցության գլխավոր գծի կիրառման ճամբին ցցված բոլոր արգելակների դեմ, ուժեղացնելով քաղաքական մասսայական աշխատանքները փայատերերի մեջ և բանվորական հսկողությունը կոոպերացիայի աշխատանքներ վրա։



# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հ. Կ. (բ) Կ. Լենքաղկոմի 1932 թ. օգոստոսի 7-ի վորոշումը)

Քաղկոմի բյուրոն գտնում է, վոր ժողսննդի ցանցի կուսակցական կազմակերպությունը, կազմակերպչական կուսակցական և մասսայական դաստիարակչական աշխատանքների վերակառուցումը թերագնահատելու հետևանքով չի կարողացել կուս կազմակերպության և անկուսակցական բանվոր-ծառայողների ուշադրության կենտրոնում դնել ժողսննդի աշխատանքների վերակառուցման խնդիրները, վորպես արդֆինպլանների կատարման համար անհրաժեշտ ցեխերից մեկը, վորը վերարտադրում է պլանների համար պայքարող կենդանի մարդկանց ուժը, վորի համար թույլ է յեղել պայքարը ժողսննդի ծավալման, նրա վերակազմության, մեքենայացման, ռացիոնալիզացման ճաշի—վորակի, մթերքների թարմության, ճաշի բարձր կալորիայի, սպիտակուցային մասի պահպանման ճաշի բազմազանության սանիտարականդրության կարգերի պահպանման ընկ. ՍՏԱԼԻՆԻ 6 ցուցմունքների կենսագործման, բրակի դեմ պայքարելու և այլն համար։

Քաղկոմը կազմակերպչական-կուսակցական և մասսայական դաստիարակչական աշխատանքների վերակառուցման և դրա միջոցով ժողսննդի արդֆինպլանների կատարումն ապահովելու նպատակով առաջարկվում է՝

1. Կուսակցականների միանգամայն անբավարար շերտը (4 տոկոս ամբողջ աշխատողների) նրանց մեծ մասի ադմինիստրատիվ և գրասենյակային աշխատողներ լինելը խոսում է այն մասին, որ կուս. ուժերի դասավորումը ճիշտ չի կատարված, որ առանձին ճաշարաններում միայն վարիչներն են կուսակցականներ, իսկ արտադրության անմիջական աշխատողների մեջ (խոհարար, մատուցող, բուֆետչիկ և այլն) կոմունիստներ չկան: Ի նկատի ունենալով այս առաջարկում է բոլոր բջիջներին վերանայել կուսակցական ուժերի դասավորումը և ապահովել կոմունիստների բարձր շերտն ժողսննդի ցանցում:

Միաժամանակ պայքարել ժողսննդի կադրերի հոսունության դեմ և մաքրել ժողսննդի ապարատը քայքայված տարրերից:

2. Առաջարկել բոլոր բջիջներին մինչև սեպտեմբեր ամիսը կոմունիստների սննդի արտադրության մեջ ունենալիք առաջատար դերն ապահովելու նպատակով անցկացնելու կոմունիստների արտադրության մեջ ունեցած մասնակցության ստուգում և ապահովել կուսակցության որոշումների կենսագործումն այդ մասին: Միաժամանակ միջոցներ ձեռք առնել այն կոմունիստների նկատմամբ, որոնք չեն արդարացնում կոմունիստի կոչումը, որոնք հարվածային չեն, որոնք չեն կատարում իրենց վրա դրված պարտականությունները:

3. Ներկուսակցական աշխատանքներն աշխուժացնելու նպատակով հանձնարարել բոլոր բջիջներին.

ա) Ստուգելու բոլոր կոմունիստներին կուսակցական պարտականությունների մեջ ընդգրկել, և գլխավորն ընդգրկել պարտականությունների մեջ ուժեղացնելով հսկողությունն այդ պարտականությունների կատարման վրա:

բ) Ստուգել կուս. թեկնածուների աշխատանքը տալով նրանց կոնկրետ պարտականություններ, օգնել ու օժանդակել նրանց իրենց հանձնարարած պարտականությունները կատարելու գործում:

գ) Կոնկրետ և օպերատիվ դարձնել ստորին կուս. օղակների աշխատանքների վրա բջիջների ղեկավարությունը:



դ) Հմտորեն նախապատրաստել կուսակցական օրը և ապահովել կոմունիստների ակտիվ մասնակցությունն այդ ժողովներին:

ե) Կուս. դիսցիպլինան ուժեղացնել բոլոր օղակներում:

զ) Կադրբաժնի միջոցով վերանայել բջիջների քարտուղարների կազմը և ապահովել կայուն, պատրաստված ընկերներով, թույլ չը տալով վորպեսզի այդ աշխատանքները դրվեն ադմինիստրացիայի վրա:

է) Հատուկ ուշադրություն դարձնել կուսակցական-ստորին կադրեր պատրաստելու վրա:

ը) Կուս. ինֆորմացիան դնել իր բարձրության վրա և ժամանակին հակազդել բանվորների և աշխատողների հուզող հարցերին:

4. Կազմ. կուս. մասսայական աշխատանքների ցածր աստիճանի վրա գտնվելը խոշոր չափով հետևանք է ժողսննդի կուս. կազմակերպության քաղաքական ցածր աստիճանի վրա կանգնած լինելուն, վորի համար կուս. բջիջները պետք է հատուկ հսկողության տակ առնեն բոլոր կոմունիստներին քաղ. ցանցում ընդգրկելը նրանց կանոնավոր հաճախումն և ամեն կերպ օժանդակել նրանց քաղաքականապես պատրաստելը:

5. Կուսակցական բջիջները պետք է անխնա պայքար մղեն միանձնյա ղեկավարության խախտման փորձերի դեմ, պարզ գիտակցելով, վոր սոսկ վարչարարությամբ և միանձնյա ղեկավարությունը փոխարինելով նրանք վոչ միայն չեն օգնում ժողսննդի աշխատանքների վորակը բարելավման այլ ընդհակառակը խանգարելով համկոմկուսի Կենտկոմի վորոշումը միանձնյա ղեկավարության մասին վրա անցի տակ են դնում ժողսննդի պլանների կատարումը: Բացի այդ բոլոր կոմունիստները և առաջին հերթին կուսակցական աշխատողները պետք է յուրացնեն, վոր միանձնյա ղեկավարության փոխանակումը ներկուսակցական աշխատանքների թուլության պատճառն է:

6. Կուս կազմակերպությունը պետք է լայն աշխատանք ծավալի անկուսակցական ակտիվի և աշխատողների շրջա-

նում, կազմակերպելով հինը գրել քաղաքական ագիտացիա լույն բացատրելով միջազգային ներքին քաղաքականության խնդիրները և այն կապելով իր հիմնարկության աշխատանքների հետ, վորի համար պետք է ոգտագործվի քաղաքական մասսայական ագիտացիայի բոլոր ձևերը խմբակային, անհատական և մասսայական ագիտացիան և բոլոր աշխատանքների տեսակները ժողովներ, զրույցներ, ընթերցումներ, դպրոցներ, խմբակներ, կուլտարշավներ, պատի լրագրեր, աֆիշներ, պլակատներ և այլն։

Միաժամանակ մոռացության չպետք է տալ առանձին շերտերի նկատմամբ տարբեր մոտեցում ունենալը և ապահովով նրանց վողջ ակտիվությունը մոբիլիզացիայի յենթարկել կուս. գլխավոր գծի կիրառման համար։

7. Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել պրոֆ. և կոմսոմոլի աշխատանքների վերակառուցման վըրա զգալով վոր նրանց աշխատանքների դանդաղ վերակառուցումը արգելակում է ժողմնդի առաջ դրած ակտուալ խնդիրների կատարումը։

8. Բաղկոմը գտնում է, վոր ժողմնդի կուս. կազմ. աշխատանքների վերակառուցման հետամնացությունը, պետք է ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել յեվ այդ վերացումը պետք է լինի քաղաքի վողջ կազմակերպության օժանդակության գործը, վոր ժողմնդի կոմունիստները պետք է ուժերի նոր մոբիլիզացիայով լծվեն այդ աշխատանքներին և ամրացնելով իրենց շարքերի մարտունակությունը կատարեն կուսակցության վորոշումները ժողմնդի վերաբերյալ։



—Կից Բաղկոմի բյուրոյի № 40
Արձ. հետ №—12. 7/8—32 թ.

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

## ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՑԱՆՑԻ ԿՈՒՍ. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հ. Կ. (բ) Կ. Կ. Լենքաղկոմի 1932 թ. օգոստոսի 7-ի վորոշումը)

Բաղկոմի բյուրոն գտնում է, վոր տնայնագործական կոոպերացիայում կուս. կազմակերպության ստեղծումը խոշոր չափով աշխուժացրել է այդ կոոպերացիայի աշխատանքները սակայն.

ա) Կուս. կազմակերպության աշխատանքների վերակառուցումը դեռևս չի ապահովում այդ կոոպերացիայի առաջ կանգնած խնդիրների լրիվ իրագործումը, դեռ ևս քաղաքական մասսայական, դաստիարակչական աշխատանքներում չեն ընդգրկված վողջ տնայնագործները, վոր դեռ թույլ է կոմունիստական ազդեցությունը նրանց վրա, վորի հետևանքով տնայնագործների ակտիվությունն ու նախաձեռնությունը լրիվ մոբիլիզացիայի չի յենթարկվում այդ կոոպերացիայի աշխատանքների ծավալման և պլանների կատարման համար։

բ) Տնայնագործական կոոպերացիայի կուս. բջիջները դեռևս բավարար չափով չեն զբաղվում ներկուսակցական խնդիրներով, վորի պատճառով թույլ է նրանց պայքարը բոլշևիկյան կուսակցության համար և դրա հետևանքով գաղափարական ցածր մակարդակի վրա գտնվելով թույլ են պայքարում հակակոմունիստական տրամադրությունների դեմ և թույլ է աշխատանքը տնայնագործներին սոցիալիստական վերակառուցման համար։

գ) Բաղկոմի բյուրոն գտնում է, վոր Համ. Ժողկոմխորհի և Կենտգործկոմի վերջին վորոշումը տնայնագործա-

կան կոոպերացիայի վերակառուցման և նրա աշխատանքների մասին, նոր հնարավորություններ է բաց անում տնայնագործական կոոպերացիայի աշխատանքները փոխադրելու նոր և ավելի բարձր աստիճանի վրա և այդպիսով ավելի բարձրացնելու նրա դերը յերկրին լայն սպառման ապրանքների մատակարարելու, ապրանքաշրջանառությունն ուժեղացնելու և կոլխոզ առևտուրը ծավալելու գործում. Այս իսկ պատճառով տնայնագործական կոոպ. կուսակցական կազմակերպության առաջ խնդիր է դրվում իր աշխատանքների անկյունաքարը դարձնել այդ վորոշումների կենսագործումը, վորի համապատասխան և վերակառուցել բջիջների կուսակցական, կազմակերպչական, մասսայական, դաստիարակչական աշխատանքները։

ԲՅՈՒՐՈՆ ՎՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գտնել անհրաժեշտ մոտ ապագայում բոլոր արտադրական առանձին միավորներում (արտելներ) ստեղծել կուսակցական բջիջները, մասսայական դաստիարակչական աշխատանքները ծավալելու կոնկրետ միջոցառումներ մշակելու և կուսակցական ուժերի դասավորումը վերանայելու միջոցով։ Կուս. բջիջների ամրացման զուգընթաց գտնել անհրաժեշտ բոլոր արտադրական ստորին ողակներում ստեղծել կուս. խմբակներ և կազմակերպիչների ցանց, վորի համար ուշադրություն դարձնել գոյություն ունեցող կուս. ստորին ողակի աշխատանքների աշխուժացման վրա։

2. Ի նկատի ունենալով, վոր ներկայիս պլանների թերակատարման հիմնական պատճառներից մեկը հումույթի պակասն է և այն, վոր հումույթ ձեռք բերելու համար թույլ է տնայնագործական կոոպերացիայի կուսակցական կազմակերպությունների աշխատանքները, քաղկոմը հիմնական խնդիր է համարում Կուս. կազմակերպության համար վորպեսզի աշխատանքի աննախընթաց թափով, ուժերի ճիշտ դասավորումով և խելացի ոգտագործման միջոցով լայն աշխատանք կատարել հումույթով ապահովելու արտադրությունը, առանձին վայրերի. գործարանների և քաղաքի ընդհանրապես ուտիլը, բրակը, մնացորդն ամբո



ղջովին ոգտագործելու, վորպես տնայնագործական կոոպերացիայի հումույթի հիմնական աղբյուր։

3. Առաջարկել կուսակցական բջիջներին, վերացնելու մինչեվ այժմ յեղած դանդաղկոտությունը, արտելներից դուրս գտնվող տնայնագործներ կոոպերացիայում ընդգրկելու և նրանց ոժանդակելու գործում, մասսայական լայն բացատրական աշխատանքի միջոցով կոմմունիստական ազդեցության տակ առնել բոլոր տնայնագործներին և հետզհետե նրանց ոգնելով, քաշել դեպի տնայն. կոոպերացիան, կազմակերպության անդամների ուշադրությունը հրավիրելով նրանց նկատմամբ կամավորական սկզբունքը խախտելու և վարչարարության վորևե փորձերի դեմ։

4. Արձանագրելով ներկուսակցական աշխատանքների դեռևս անբավարար վիճակը, տնայնագործական կոոպերացիայի կուսակցական բջիջներում և կոմմունիստների ցածր կրթական մակարդակը, քաղկոմի բյուրոն առաջնակարգ խնդիր է համարում ներկուսակցական աշխատանքների ուժեղացումը, կուս. դիսցիպլինայի բարձրացումը, կուսպարտականությունների մեջ բոլոր կոմմունիստների ընդգրկումը, նրանց առաջատար դերի ապահովումը արտադրության մեջ, կուս. աճումը, թեկնածուների մեջ կատարվելիք աշխատանքները, կուս. ուսմա նախապատրաստումը, բոլշևիկյան ինքնաքննադատության ծավալումը, քաղ. դաստիարակչական ցանցում ընդգրկել և այն, վորի համար առաջարկում է Քաղկոմի համապատասխան բաժիններին և բջիջներին հատուկ ուշադրություն դարձնել ներկուսակցական աշխատանքների ծավալման վրա և այդ հիման վրա ապահովելու պայքարը կուս. գլխավոր գծի համար։

5. Առաջարկել Կուս. բջիջներին վողջ տնայնագործների ուշադրության կենտրոնում դնելու պայքարն արտադրանքի վորակի համար, վորպեսզի հանգամանքը մինչեվ այժմ անուշադրության և մատնված յեղել, վորի հետևանքով անվորակ արտադրանքը խփել է տնայնագործական կոոպերացիայի աշխատանքներին։ Պայքարը արտադրանքի և աշխատանքների վորակի համար պետք է այնպես կազմակերպել, վորպեսզի բջ[illegible]ունենա իր առանձն

...ОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ու օգգանումը և մեղավորները պետք է ժամանակին խարազանվեն տնայնագործների կողմից։

6. Առաջարկել կուս. բջիջներին եւ ավելի կոնկրետ և օպերատիվ դարձնելու կուսակցական ղեկավարությունն արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար, քանի որ ինքնարժեքի իջեցումը և որակի բարձրացումը նրանց աշխատանքների հաջողությունը լավագույն գրավականն է։

Բյուրոն գտնում է, որ ինքնարժեքի իջեցման և որակի բարձրացման լավագույն լծղանակը, դա արտադրական տեխնիկային տիրապետելն է, որի ուղղությամբ թույլ է յեղել կուս. բջիջների աշխատանքները (ռացիոնալացման և գյուտարարության)։

7. Բյուրոն գտնում է, որ կուս. աշխատանքների վերակառուցումն իր հերթին պետք է ուժեղացնի տնտեսավարների ղեկավարությունը և ապահովի նրանց կարգադրությունների կատարումը։

8. Կուս. բջիջները թույլ չը պետք է տան խառնվելու տնտեսավարների կարգադրություններին այլ ընդհակառակը պետք է եւ ավելի ամրացնեն բրիգադիրների աշխատանքները և բարձրացնեն բրիգադիրների դերն արտադրության կազմակերպման և ղեկավարման գործում։

9. Կազմակերպչական կուսակցական և քաղաքական, դաստիարակչական աշխատանքների վերակառուցումը պետք է արմատապես ապահովի կոմունիստների ակտիվ մասնակցությունը և առաջատար դերն արտադրության պլանների կատարման համար մղվող պայքարում և պետք է չերեվան հանի պասիվ, բալաստ, քայքայված և օպորտունիստ տարրերին ու դրա հիման վրա կուս. բջիջները պետք է ազատվեն այդ նման տարրերից ու նրանց փոխարեն կուս. շարքերը պետք է խտացնեն առաջավոր, հարվածային-նվիրված և կայուն բանվորները։ Կոմունիստների առաջատար դերն արտադրության մեջ ապահովելու նպատակով քաղկոմն առաջարկում է բջիջներին ոգոստոս ամսում ամփոփելու կոմունիստների առաջատար դերի ստուգումը։

9. Առաջարկել կին սեկտորին և բջիջներին հատուկ



հսկողության տակ առնելու տնայնագործական ցանցում աշխատող կանանց մեջ տարվելիք աշխատանքներն, ավելի շատ ուշադրություն դարձնելով կանանց աշխատանքների համար պայմաններ ստեղծելու վրա և առաջավոր կանանց առաջ քաշել արտելների ղեկավար աշխատանքներում։

10. Միանգամայն անբավարար համարելով տնայնագործների մեջ տարվելիք կուլտուրական մասսայական աշխատանքները, առաջարկել քաղկոմին ագիտմասս և կուլտպրոպ-բաժիններին ու բջիջներին արմատապես վերակառուցելու ագիտացիայի և կուլտուր. աշխատանքները (ակումբ, պատի լրագիր, դասախոսություն, զրույցներ, քաղ. ու, անգրագիտության վերացում և այլն)։

11. Առաջարկել ԼԿՅԵՄ քաղկոմին վերակառուցելու ԼԿՅԵՄ աշխատանքները և ապահովելու նրանց պայքարը պլանների կատարման գործում։

12. Առաջարկել բջիջներին, ագիտմասսայական աշխատանքների ուժեղացման հետեվանքով, բանվորների կարծիքներն հաշվառման հիման վրա, նրանց խանդավառության մոբիլիզացիայով բոլշեվիկորեն ձեռնարկել ընկ. ՍՏԱԼԻՆԻ 6 ցուցմունքների կենսագործմանը։

13. Քաղկոմն գտնում է, որ տնայնագործական կոոպերացիայի կուսակցական կազմակերպությունը կարող է պատվով կատարել իր առաջ դրված խնդիրները, անշեղ կենսագործել կուսակցության գլխավոր գիծը, ուժեղ պայքար մղել աջ և «ձախ» օպորտունիստների դեմ, միայն այն դեպքում, յեթե կուս. կազմակերպչական, կուսակցական և կուս. մասսայական, դաստիարակչական աշխատանքներն արմատապես վերակառուցվի և դեն շպրտվի այդ վերակառուցման ճանապարհին յեղած բոլոր տեսակի օպորտունիստական արգելակները։

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0195584

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТО[illegible]
Академии [illegible]
С-СР